ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

**«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ-ի «ՆՍՄՀԿ-ԳՀԱՊՁԲ-24/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի**

**Հայտերի բացման նիստը տեղի ունեցավ 26.06.2024թ., ժամը՝ 12:00-ին, ք. Երևան, Աբովյան 22Ա, 74 տարածքում**

**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**
Արտյոմ Մովսեսյան
**Հանձնաժողովի գնահատող անդամներ՝**
Արման Սահակյան
Լևոն Չիլինգարյան
**Հանձնաժողովի քարտուղար՝** Մ. Մկրտչյան

**Հանձնաժողովն արձանագրեց հայտերի բացման փաստը և որոշեց նիստը շարունակել մասնակիցների կողմից ներկայացված հայտերն ուսումնասիրելուց հետո:**

**01.07.2024թ., ժամը 16:10-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.**

**«ՆՍՄՀԿ-ԳՀԱՊՁԲ-24/9» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

(Մ. Մկրտչյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակցի անվանման և հասցեի մասին.
2. Տվյալներ՝ ծրարի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.
3. Բացված ծրարում «ՆՍՄՀԿ-ԳՀԱՊՁԲ-24/9» ծածկագրով գնանշման հարցման հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և դրանց՝ «ՆՍՄՀԿ-ԳՀԱՊՁԲ-24/9» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին) համապատասխան կազմված լինելու մասին.
4. Մասնակցի առաջարկած գնի վերաբերյալ.
5. Բանակցությունների վարման մասին.
6. Ներկայացված գնային առաջարկի հիման վրա՝ «ՆՍՄՀԿ-ԳՀԱՊՁԲ-24/9» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված և ընտրված մասնակցի որոշման մասին.
7. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝3,դեմ՝0:*

**1. Հայտ ներկայացրած մասնակցի անվան և հասցեի մասին**

(Մ. Մկրտչյան)

1.1 «ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ-ի կողմից թղթային եղանակով կազմակերպված «ՆՍՄՀԿ-ԳՀԱՊՁԲ-24/9» ծածկագրով գնման ընթացակարգին սահմանված ժամկետում հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

| N | Մասնակից | ՀՎՀՀ | Հեռախոսահամար | Էլ. հասցե |
|---|---|---|---|---|
| 1 | «ԱՐԵԳԱԿ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 02316284 | 033 83 83 88 | aregakgroup@gmail.com |

*Ընդունվել է որոշում, կողմ՝3, դեմ՝0:*

**2. Տվյալներ՝ ծրարի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.**

(Մ. Մկրտչյան)

2.1 ՆՍՄՀԿ-ԳՀԱՊՁԲ-24/9» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի հայտ պարունակող ծրարը կազմվել և ներկայացվել սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան.

*Ընդունվել է որոշում, կողմ՝3, դեմ՝0:*

**3. Բացված ծրարում «ՆՍՄՀԿ-ԳՀԱՊՁԲ-24/9» ծածկագրով գնանշման հարցման հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և դրանց՝ սույն ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին) համապատասխան կազմված լինելու մասին.**

(Մ. Մկրտչյան)

3.1 Գնահատող հանձնաժողովի անդամների կողմից բացվեց **«ԱՐԵԳԱԿ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի**՝ բավարար գնահատված հայտ պարունակող ծրարը և արձանագրվեց, որ դրանում առկա են «ՆՍՄՀԿ-ԳՀԱՊՁԲ-24/9» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը:

3.2 Գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ մասնակցի հայտ պարունակող ծրարում առկա փաստաթղթերը, համապատասխանում են «ՆՍՄՀԿ-ԳՀԱՊՁԲ-24/9» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով նախատեսված պայմաններին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝3,դեմ՝0:*

**4. Մասնակցի առաջարկած գնի վերաբերյալ**

(Մ. Մկրտչյան)

4.1 «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության և սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

| Չ/հ | Գնման առարկա | Չ/մ | առավելագույն քանակ | գնման ընդհանուր առավելագույն գին՝ ՀՀ դրամ | Մրցույթին մասնակցող կազմակերպությունների | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Անվանումները | Գնային առաջարկ /ՀՀ դրամ/ | | |
| | | | | | | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գին |
| 1. | Լուբրիկանտ | հատ | 16022 | 8 812 100 (ութ միլիոն ութ հարյուր տասներկու հազար մեկ հարյուր) **առանց ԱԱՀ**<br>10 574 520 (տասը միլիոն հինգ հարյուր յոթանասունչորս հազար հինգ հարյուր քսան) **ներառյալ ԱԱՀ** | «ԱՐԵԳԱԿ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 8 812 100 | 0 | 8 812 100 |

Մրցույթի շրջանակում ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում հաղթող մասնակցի հետ կկնքվի պայմանագիր մինչև 10 574 520 ՀՀ դրամ (տասը միլիոն հինգ հարյուր յոթանասունչորս հազար հինգ հարյուր քսան՝ ներառյալ ԱԱՀ), քանի որ պետությունը առանձին է հատուցում ՀԿ-ին ԱԱՀ-ն, արդյունքում, ստացվում է, որ, եթե հաղթող Մասնակիցը ԱԱՀ վճարող չէ, ապա տվյալ ապրանքատեսակի մասով նախահաշվային գինը կազմում է 8 812 100 ՀՀ դրամ տասը միլիոն հինգ հարյուր յոթանասունչորս հազար հինգ հարյուր քսան) առանց ԱԱՀ

4.2 Մասնակցի հայտ պարունակող ծրարում առկա գնային առաջարկը և դրանց հաշվարկման ճշտությունը (հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են (ճիշտ են):

4.3 Ըստ ներկայացված տվյալների, «ԱՐԵԳԱԿ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն ԱԱՀ վճարող չէ:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝0:*

**5. Բանակցությունների վարման մասին.**

(Մ. Մկրտչյան)

5.1 Բանակցություն չի վարվել

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝0:*

**5. Ներկայացված գնային առաջարկի հիման վրա՝ սույն ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած և ընտրված մասնակցի որոշման մասին.**

(Մ. Մկրտչյան)

5.1 **01.07.2024.-ին**՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից տրամադրված գնահատման թերթիկները, որոշեց ներկայացված գնային առաջարկի հիման վրա «ՆՍՄՀԿ-ԳՀԱՊՁԲ-24/9» ծածկագրով գնանշման հարցման հրավերի պահանջներին բավարար գնահատված և ընտրված մասնակից հայտարարել՝ **«ԱՐԵԳԱԿ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին:**

5.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՆՍՄՀԿ-ԳՀԱՊՁԲ-24/9» ծածկագրով գնանշման հարցման արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը: **Սույն ընթացակարգի շրջանակում անգործության ժամկետ չի կիրառվել, քանի որ հայտ ներկայացրած մասնակիցը միակն էր:**

5.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՆՍՄՀԿ-ԳՀԱՊՁԲ-24/9» ծածկագրով գնանշման հարցման ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի պահանջները:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**6. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:**

(Մ. Մկրտչյան)

6.1 «ՆՍՄՀԿ-ԳՀԱՊՁԲ-24/9» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**7. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

(Մ. Մկրտչյան)

7.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**8. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

(Մ. Մկրչյան)

8.1 «ՆՍՄՀԿ-ԳՀԱՊՁԲ-24/9» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքում գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել ոչ ուշ, քան գնման պայմանագիր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, **ք. Երևան, Աբովյան 22Ա, 74 տարածքում** /հասցեում/:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:’*

**Գնահատող հանձնաժողովի նախագահ՝** _______________ Ա. Մովսեսյան

**հանձնաժողովի անդամներ՝** _______________ Ա. Սահակյան

_______________ Լ. Չիլինգարյան

**քարտուղար ՝** Մ. Մկրտչյան